



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 11 ՄԱՐՏ, 2013

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՄՈՆԻ 9

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՄԱՐԴՈՒՆ

Ո՞ր մարդը կրնայ իմանալ Աստուծոյ խորհուրդները, եւ կամ ո՞վ կրնայ խելամուտ ըլլալ, թէ ինչ կը կամենայ Տէրը. որովհետեւ մահկանացուներուն մտածումները անստոյգ են, իսկ մեր գիտելիքները՝ անհաստատ: Եղծանելի մարմինը կը ծանրացնէ հոգին, եւ հողեղէն այս յարկը բազմահոգ կը դարձնէ միտքը: Ուստի մենք հազիւ թէ նկատենք երկրային բաները եւ չարչարանքներով կը գտնենք զայն: Իսկ այն ինչ որ կը գտնուի երկնքի մէջ, ո՞վ կրնայ բնել, եւ ո՞վ կրնայ գիտնալ բոլոր խորհուրդներդ, եթէ դուն իմաստութիւն չտաս, եւ բոլոր Հոգիդ չդրկես բոլոր բարձրումներէդ: Այսպէս է որ երկրայինները ուղղեցին իրենց շաւիղները եւ սորվեցան այն ինչ որ հանելի է քեզի եւ փրկուեցան բոլոր իմաստութեամբդ:

### ՆԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէլոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ԱՂՈԹՔ

**Տ**էր Աստուած գթութեան, փրկութեան եւ ողորմութեան, բաւութեան եւ նորոգութեան, բժշկութեան եւ առողջութեան, լուսաւորութեան եւ կենդանութեան, բարութեան եւ անմահութեան, յիշէ մեզ երբ գաս բոլոր թագաւորութեամբդ, եւ երբ կանչես մեզ, «Ո՞ւր է՛ք», պատասխանենք՝ «Ահա հոս ենք, Տէր»: Բոլոր փառքիդ համար յաւիտեանս յաւիտենից: Ամէն:



Ինչպես որոշ կենդանիներ, այս պարագային ալ՝ օձը խորհրդանիշ է իմաստութեան եւ հնարամտութեան: Ահա այս կերպարին փակն է որ Սաբանան կ'օգտագործէ ծուղակը ձգելու համար մարդը: Այնպէս ինչպէս կը կարդանք Յայտն 20:1-2 «Ան բռնեց վիշապը, այսինքն առաջինն օձը, որ Բանասարկուն ու Սաբանան է»: Քրիստոս զայն կը կոչէ «ստութեան հայր» (Յի 8:44-45): Այս պարագային Սաբանային սուրը Աստուծոյ նմանելու խոստումն է, որ սակայն երբեք ալ այդպէս չէր ու չէր: Այդ սուրը, սակայն, բոլոր ժամանակներու համար է, որովհետեւ մարդը միշտ ալ ձգտած է գիտութիւն ձեռք բերելու, եւ արով փառասիրութիւն: Խորքին մէջ մարդը սրեղծուած ըլլալով Աստուծոյ պարկերով ու նմանութեամբ՝ սրբութեամբ, ճշմարտութեամբ եւ արդարութեամբ, նման էր Աստուծոյ եւ հաղորդ Աստուծոյ կամքին գիտութեան: Եւ ահա այդ ցանկութեան արդիւնքը պիտի ըլլար անհնազանդութիւն Աստուծոյ պարտիրանին:

Չարին ամբողջ ճիգն էր ցոյց փայլ թէ Աստուած սուր խօսած է մարդուն: Արով մարդուն մէջ արթնցնելու գոգիր՝ աստուածներու պէս ըլլալու, եւ կասկած՝ Աստուծոյ խօսքին նկատմամբ:

Ճաշակելէ յետոյ, անոնք զգացին որ խափուած են, որովհետեւ ոչ միայն գիտութիւն ձեռք ձգեցին, այլ ընդհակառակը՝ իրենց ունեցած գիտութիւնն ալ կորսնցուցին, ինչպէս նաեւ սրբութեան եւ արդարութեան վիճակը: Այս վիճակն է որ կը կոչուի **անկում**:

Ահա սկիզբէն Աստուած դրախտին մէջն իսկ Իր խօսքին ու կամքին նկատմամբ հնազանդութիւն (պահել) հաստատած էր, որ սակայն մարդը յարգեց եւ մահուան ենթարկուեցաւ: Այնպէս ինչպէս պարտք ունեցողը միշտ կ'ուզէ փախուստ փայ պարտաւերէն, նոյնպէս ալ մեղաւոր մարդը ուզեց փախուստ փայ Աստուծոյ ներկայութենէն եւ պահուրեցաւ: Աստուած սկիզբէն մարդուն զանձ փրուա՝ արդարութիւն, սրբութիւն, ճշմարտութիւն, գիտութիւն, սակայն մարդը այդ զանձը վարնեց, ինչպէս անառակ որդին: Ինչպէս անառակ որդին հօրը ըսաւ այլեւս արժանի չեմ որդիդ կոչուելու, նոյնպէս ալ մարդը նոյն վիճակին մէջ զգաց ինքզինք, որ ալ արժանի չէ Աստուծոյ ներկայանալու եւ ծառի երեւ պահուրեցաւ:

**«Աղամ ո՞ր ես»:** Աստուծոյ մնայուն Հայրական սէրը եւ հոգածութիւնը հանդէպ մարդուն: Աստուած Ինք է նախաձեռնողը, փնտրողը: Տակաւին, Աստուծոյ մանկավարժական մեթոտը հարցաքննութեան: Հակառակ որ Աստուած ամենագէտ է եւ գիտէ ամենայեւրին մանրամասնութիւններն իսկ, բայց Ան նաեւ կ'ուզէ որ մարդ արարածը ինք արտայայտէ իր սխալը, գիտակցի այդ սխալին:

**«Թզենիի րերուներով ծածկոցներ կարեցին»:** Մի գուցէ որպէս լայն րերուներ: Բայց Նոր Կրակարանին մէջ գիտենք որ Քրիստոս թզենին անիծեց: Ոչ թէ միայն պտուղ չբալուն համար, այլ նաեւ, մարդուն անկումէն յետոյ թզենին դարձաւ խորհրդանիշ, որ մարդ իր մեղքը կ'ուզէ ծածկել թզենիի րերուներով: Ուրեմն թզենին անիծելով, Քրիստոս նաեւ ցոյց փուաւ որ մարդը չի կրնար այդ ձեռով փրկութեան հասնիլ:

Աստուծոյ փուած հարցումին դիմաց մարդուն պարասխանը կ'ըլլայ «Այն կինը որ ինձի հետ ըլլալու համար փուիր, ան ինձի փուաւ ծառէն ու ես կերայ»: Պարասխան մը որ յարուկ է իւրաքանչիւր մարդ արարածին, որ երբեք չ'ուզեր ճանչնալ եւ ընդունիլ իր յանցանքները: Որքան ալ գիտնանք որ յանցաւոր ենք: Որովհետեւ սխալը ճանչնալ եւ ընդունիլ արդէն դարմանումի ճամբան է: Միւս կողմէ, եթէ երբեք մարդը ճշմարիտ գիտութիւնը ունենար պիտի նաեւ ճանչնար եւ ընդունէր սխալը, բայց րգիտութեան արդիւնքն է նաեւ սխալը ճանչնալ եւ չընդունիլ:

Աստուած դարավճիռներ կը ներկայացնէ յանցանք գործողներուն. առաջին օձին, յետոյ կնոջ եւ յետոյ Ադամին:

**ԱՂՈԹՔ**

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի փուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ք քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*